ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<< ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/191>> ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգով իրականացվող ընթացակարգի գնահատողի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

13 սեպտեմբերի 2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Կատվալյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասատրյան /գնահատող/, Մ. Գրիգորյան /գնահատող/, Մ. Թադևոսյան /բացող/, Ա. Մովսեսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Եղիազարյան

1. Ոչ գնային պայմաններին բավարարող մասնակցի հետ բանակցությունների վարման մասին

(Ս.Կատվալյան)

1.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ <<ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/191>> ծածկագրով գնման ընթացակարգի որոշ չափաբաժինների մասով ընտրված մասնակցին որոշելու նպատակով անցկացվել է գների նվազեցման բանակցություններ:

1.2 Բանակցությունների վարման նիստին մասնակցելու նպատակով ծանուցված մասնակիցները ներկա չեն գտնվել նիստին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

2. Գնանշման հարցում ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Ս.Կատվալյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <<ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/191>> ծածկագրով գնման ընթացակարգի

-1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Էկոմիքս» ՍՊԸ-ն,

-3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ 9-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՍՅՌՈՒՄԱ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ս.Կատվալյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ս.Կատվալյան)

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը գնման ընթացակարգը 2-րդ, 5-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

-Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ս.Կատվալյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ստացման հաջորդ օրը ժամը 10:00-ին Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 2-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Ս. Կատվալյան* _____

Հանձնաժողովի անդամներ՝ *Ս. Ասատրյան* _____

Մ. Գրիգորյան _____

Մ. Թադևոսյան _____

Ա. Մովսեսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ *Մ. Եղիազարյան* _____